«ԻՆՏԵԳՐԱՑԻԱ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

հետազոտական-վերլուծական հասարակական կազմակերպություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(սոցիոլոգիական հետազոտություն)

5-11 հոկտեմբերի, 2013թ.

ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(նախագծի ղեկավար, սոց.գ.թ.)

Երևան – 2013

Հետազոտության հայեցակարգը և գործիքակազմը, ինչպես նաև արդյունքների վերլուծությունն իրականացրել է «Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ և «Նորավանք» ԳԿՀ համատեղ հետազոտական խումբը (Ս.Մանուկյան, Ա.Սաֆարյան, Գ.Հարությունյան)

Դաշտային աշխատանքներն իրականացրել է IPSC-ը (Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հետազոտության նպատակը 4

Հետազոտության մեթոդը և ընտրանքը 5

Հետազոտության հիմնական արդյունքները 6

Եվրոպական միության և Ռուսաստանի հետ Հայաստանի համագործակցության գերակայականությունը 6

Եվրոպական միության և Ռուսաստանի հետ համագործակցության գերակայությունները տարբեր ոլորտներում 10

Հատուկ առաջարկությունները 11

Հայաստանի անդամակցությունը Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միությանը 13

Մշակութային-լեզվական դիրքորոշումները 15

Հիմնական եզրակացություններ 19

Հավելված 1. Հետազոտության ընտրանքի ներկայացուցչականությունը 20

Հավելված 2. Ամփոփիչ աղյուսակներ 21

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության նպատակն է.

1. Ստանալ Հայաստանի հասարակության ընդհանուր դիրքորոշումների համեմատական գնահատականները Ռուսաստանի և Եվրոպական միության հետ Հայաստանի համագործակցության վերաբերյալ:
2. Վեր հանել Հայաստանի հասարակության դիրքորոշումները Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միությանը Հայաստանի միանալու վերաբերյալ:
3. Վեր հանել Հայաստանի հասարակության համեմատական գերակայությունները Հայաստանի համար կենսականորեն կարևոր ոլորտներում Ռուսաստանի և Եվրամիության հետ համագործակցության, ինչպես նաև Ռուսաստանի և Եվրամիության առանձին առաջարկությունների վերաբերյալ:
4. Գնահատել Հայաստանի հասարակության կողմից ռուսական և եվրոպական մշակութային տարածությունների հեռավորության ընկալումները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ

Հետազոտությունն իրականացվել է հեռախոսային զանգվածային սոցիոլոգիական հարցման մեթոդով:

Հետազոտության գլխավոր համակցությունն էր Հայաստանի 18 և ավելի տարիքի բնակչությունը: Ընտրանքի ծավալը՝ 1000 հարցվող: Ընտրանքային սխալը 0.95 հավանականությամբ՝ ±3.1%:

Ընտրանքի տեսակը՝ պարզ պատահական: Ընտրանքի ներկայացուցչականությունն ապահովվել է Հայաստանում հեռախոսահամարների (բջջային և գծային) ընդհանուր ցուցակի առկայությամբ, որից պատահականներեն ընտրվել են հարցազրույցի հեռախոսահամարները: Ընտրանքի որակի գնահատականը տե՛ս Հավելվածում:

Ընտրանքը ներկայացուցչական է հանրապետական մասշտաբով ըստ հարցվածների սեռի, տարիքի, բնակության մարզի (մայրաքաղաք և 10 մարզեր), բնակավայրի տեսակի (մայրաքաղաք, քաղաքներ, գյուղեր) :

Հետազոտության հարցաշարը կազմված էր 26 հարցից՝ ներառյալ հարցերը հարցվողի սոցիալ-ժողովրդագրական բնութագրերի վերաբերյալ: Հարցազրույցի միջին տևողությունը՝ 8-10 րոպե:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2013թ. հոկտեմբերի 5-11-ը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Եվրոպական միության և Ռուսաստանի հետ Հայաստանի համագործակցության գերակայականությունը

Հետազոտությունում նախ գնահատվել է Հայաստանի բնակչության հետաքրքրվածության մակարդակը Ռուսաստանի և Եվրամիության հետ ՀՀ փոխհարաբերությունների հարցով: Պարզվել է, որ այն բավական բարձր է: Այդ հարցը հետաքրքրում է Հայաստանի բնակչության գրեթե երեք քառորդին (74%, Գծապատկեր 1): Համեմատության համար նշենք, որ 2013թ փետրվարի նախագահական ընտրություններից մեկ ամիս առաջ քաղաքականությամբ հետաքրքրվում էր Հայաստանի բնակչության 62%-ը:



Գծանկար 1. Հետաքրքրվածությունը Եվրոպական միության և Ռուսաստանի հետ Հայաստանի փոխհարաբերությունների հարցով

Գնահատելու համար Հայաստանի հասարակությունում Ռուսաստանի և Եվրամիության հետ համագործակցության կողմնորոշումների բաշխումը՝ կիրառվել է հետևյալ հարցը. «Ձեր կարծիքով, ո՞ւմ հետ առաջին հերթին պետք է զարգացնի իր հարաբերությունները Հայաստանը՝ Ռուսաստանի՞, թե՞ Եվրոպական միության»: Պատասխանների տարբերակները հարցվողներին չէին հուշվում: Ընդունվում էր նաև «Երկուսի հետ էլ» տարբերակը: Պատասխանների բաշխումը տրված է Գծանկար 2-ում:

Ռուսաստանի հետ համագործակցությունը գերադասել է հարցվածների 67%-ը, ինչը զգալիորեն գերազանցում է Եվրամիության հետ համագործակցությունը գերադասողների քանակը (17%):

Քանի որ հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում Հայաստանի հանրային կարծիքի (ինչպես, ի դեպ, քաղաքական իշխանությունների) վրա ուժեղ ճնշում է գործադրվել՝

այն մտքի պարտադրմամբ, թե ընտրությունը կարող է լինել միայն «կամ-կամ» տարբերակով, «Երկուսի հետ էլ» պատասխանողներին լրացուցիչ հարց է տրվել. «Իսկ եթե Հայաստանը ստիպված լինի հարաբերությունները զարգացնել կամ՝ միայն Ռուսաստանի, կամ՝ միայն Եվրոպական միության հետ, այդ դեպքում նա պետք է ընտրի համագործակցությունը Ռուսաստանի՞, թե՞ Եվրոպայի հետ»:

Երկու հարցերի համադրության արդյունքում ստացվել է, որ եթե Հայաստանի հասարակությանը պարտադրվի «կամ՝ միայն Ռուսաստան, կամ՝ միան Եվրոպական միություն» այլընտրանքը, ապա ռուսաստանյան կողմնորոշումը նախընտրողների քանակը կաճի մինչև 75%, իսկ եվրոպական կողմնորոշումը գերադասողներինը՝ մինչև 19% (Գծապատկեր 3):



Գծանկար 2.



Գծանկար 3.

Հետազոտվել է, թե որոնք են հասարակական գիտակցությունում Հայաստանի «բարեկամ» և «թշնամի» երկրները: Այդ նպատակով նախ հարց է տրվել. «Ձեր կարծիքով, որո՞նք են Հայաստանի բարեկամ երկրները» (ընդունվել է մինչև 5 պատասխան), որից հետո. «Իսկ որո՞նք են Հայաստանի թշնամի երկրները» հարց (ընդունվել է մինչև 5 պատասխան): Գծապատկերներ 4-ում և 5-ում ներկայացված են այն երկրները, որոնք նշել է հարցվողների 1%-ից ավելին:

Ճնշող գերազանցությամբ հայկական հասարակությունում առավել բարեկամական երկիր է ընկալվում Ռուսաստանը (նշել է հարցվողների 82%-ը): Նշանակալիորեն հետ մնալով երկրորդ տեղում է Ֆրանսիան (21%): Երրորդ-չորրորդ տեղերը՝ Ֆրանսիայից նշանակալիորեն հետ մնալով, կիսում են Վրաստանը (12%) և ԱՄՆ-ը (11%):

Որպես թշնամական երկրներ են ընկալվում Ադրբեջանը (77%) և Թուրքիան (72%): Երրորդ տեղում է Վրաստանը (5%):



Գծանկար 4.



Գծանկար 5.

Հետազոտվել է, թե ինչ է իրենից ներկայացնում «Եվրոպան» հասարակական գիտակցությունում: Դրա համար տրվել է հետևյալ հարցը. «Ձեր կարծիքով, ո՞ւմ հետ առաջին հերթին պետք է զարգացնի իր հարաբերությունները Հայաստանը՝ Ռուսաստանի՞, թե՞ Եվրոպական միության»: Ընդունվել է մինչև 5 պատասխան (Գծապատկեր 6):

Պարզվել է, որ հասարակական գիտակցությունում Եվրոպայի «միջուկը» համապատասխանում է իրականությանը. դա Ֆրանսիան է (հիշատակված բոլոր երկրների 32%-ը) և Գերմանիան (21%): Հարկ է ուշադրություն դարձնել, որ Ֆրանսիան է առաջին տեղում, այլ ոչ թե Գերմանիան, ինչն, ի դեպ համապատասխանում է նաև հետազոտությամբ հայտնի դարձած փաստին, որ այն հասարակական գիտակցությունում եվրոպական երկրների շարքում Հայաստանի ամենամեծ բարեկամ երկիրն է:

Հասարակական գիտակցությունում Եվրոպայի կարևորագույն երկրների երկրորդ խումբն են կազմում Մեծ Բրիտանիան (8%) և Իտալիան (7%):

Հարկ է ուշադրություն դրաձնել, որ պատասխանների 3%-ում Ռուսաստանը նշվել է որպես «եվրոպական երկիր [որի հետ Հայաստանը պետք է հարաբերություններ զարգացնի]»:



Գծանկար 6.

Եվրոպական միության և Ռուսաստանի հետ համագործակցության գերակայությունները տարբեր ոլորտներում

Հետազոտվել է հետևյալ հարցը՝ Հայաստանի հասարակությունը Ռուսաստանի՞, թե՞ Եվրոպական միության հետ համագործակցությունն է ավելի կարևոր համարում Հայաստանի ազգային անվտանգության և ազգային շահի հարցերում:

Հետազոտվել են այդ ընդհանուր հարցի հետևյալ բաղադրիչները.

1. Ո՞վ է Հայաստանի համար ավելի կարևոր դաշնակից թուրքական և ադրբեջանական պատերազմական վտանգի դեմ՝ Ռուսաստա՞նը, թե՞ Եվրոպական միությունը;
2. Ո՞վ է Ղարաբաղի հարցում Հայաստանի ավելի վստահելի դաշնակիցը՝ Եվրոպական միությո՞ւնը, թե՞ Ռուսաստանը;
3. Ո՞ւմ հետ համագործակցությունն է ավելի նպաստավոր Հայաստանի արդյունաբերության զարգացման համար՝ Եվրոպական միությա՞ն հետ, թե՞ Ռուսաստանի;
4. Ո՞ւմ հետ համագործակցությունն է ավելի նպաստավոր Հայաստանի գիտության զարգացման համար՝ Եվրոպական միությա՞ն հետ, թե՞ Ռուսաստանի;
5. Ո՞ւմ հետ համագործակցությունն է ավելի նպաստավոր Հայաստանում իրավական պետության զարգացման հարցում՝ Ռուսաստանի՞ հետ, թե՞ Եվրոպական միության:

Արդյունքները ներկայացված են Գծանկար 7-ում: Տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի ռազմական անվտանգության, Ղարաբաղյան հակամարտության և արդյունաբերության զարգացման ոլորտներում Հայաստանի հասարակությունը Ռուսաստանի հետ համագործակցությունը նշանակալիորեն ավելի նախընտրելի է համարում ԵՄ-ի հետ համագործակցությունից, իսկ գիտության զարգացման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում գերադասում է ԵՄ-ի հետ համագործակցությունը:



Գծանկար 7.

Հարկ է նշել, որ սոցիոլոգիական այլ հարցումներից հայտնի է, որ Հայաստանի հասարակությունը որպես Հայաստանի առավել գերակա խնդիրներ է համարում գործազրկությունը, աղքատությունը, ցածր աշխատավարձերը, թոշակները և լայն սպառման ապրանքների բարձր գները: Իսկ այդ հարցերի լուծումը գտնվում է Հայաստանի արդյունաբերության զարգացման ոլորտում:

Հատուկ առաջարկությունները

Հետազոտությամբ նախատեսվում էր գնահատել Հայաստանի հասարակության համար Մաքսային միության և ԵՄ-ի հետ Ասոցիացման պայմանագրի առաջարկությունների համեմատական կարևորությունը: Սակայն, եվրոպական առաջարկությունների անորոշության պայմաններում, նման գնահատումը հեռախոսային հարցազրույցի սահմանափակ հնարավորություններով անհնար էր:

Ուստի, անցկացվել է միայն մեկ ռուսական և մեկ եվրոպական առաջարկի (որն ուներ իրեն համապատասխանողը ռուսական առաջարկների թվում) համեմատական կարևորության գնահատում: Տրվել է հետևյալ հարցը. «Ո՞րն է ավելի գերադասելի Հայաստանի համար՝ գազի և էլեկտրաէներգիայի գների իջեցո՞ւմը, թե՞ Եվրոպայից Հայաստան բերվող ապրանքների գների իջեցումը»: Այս դեպքում «Երկուսն էլ» պատասխանը չի ընդունվել, հարցվողին լրացուցիչ խնդրել են կողմնորոշվել և պատասխանել «կամ/կամ»:

Տվյալները ցույց են տվել, որ Հայաստանի բնակչության համար էժան գազն ու էլեկտրաէներգիան անհամեմատ ավելի կարևոր են (գերադասել է հարցվողների 88%-ը, Գծանկար 8), քան եվրոպական ապրանքների գները (գերադասել է հարցվողների 7%-ը):

Հայաստանի համար մեկ այլ կարևոր խնդիր է Ռուսաստանում աշխատանքային միգրացիայի հնարավորությունը: Նշենք, որ Ռուսաստանից Հայաստան ուղարկված մասնավոր տրանսֆերտները 2012թ. կազմել են գրեթե $1.4 մլրդ, ինչը կազմում է Հայաստանի ՀՆԱ 15%-ը և երկրում աշխատավարձի ամբողջ ֆոնդի մոտ 50%-ը, ներառյալ մասնավոր և բյուջետային հատվածը: Հայտնի է, որ Մաքսային միությանը չանդամակցող երկրների համար սահմանվելու է Ռուսաստան այցելելու վիզային ռեժիմ: Մյուս կողմից՝ Եվրոպայի հետ ասոցիացման պայմանագիրը Եվրոպական միություն ազատ մուտքի և աշխատանքի թույլտվության հնարավորություն չի նախատեսում:



Գծանկար 8.

Աշխատանքային միգրացիայի կարևորությունը Հայաստանի համար գնահատվել է «Որքանո՞վ է Հայաստանի բնակչության համար կարևոր Ռուսաստան ազատ այցելելու և աշխատելու

հնարավորությունը. շա՞տ կարևոր է, կարևո՞ր է, միջի՞ն կարևորություն ունի, քի՞չ կարևոր է, բոլորովի՞ն անկարևոր է» հարցով (Գծանկար 9):

Հայաստանի համար Ռուսաստանում աշխատանքային միգրացիայի հնարավորությունը «շատ կարևոր» կամ «կարևոր» է գնահատել հարցվածների 83%-ը, «քիչ կարևոր» կամ «բոլորովին անկարևոր»՝ 4%-ը:



Գծանկար 9.

Հայաստանի անդամակցությունը Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միությանը

Հեռախոսային հարցազրույցի ընթացքում նախ գնահատվել է Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միության մասին բնակչության տեղեկացվածության մակարդակը (Գծանկար 10): Դրանից հետո գնահատվել է Մաքսային միություն մտնելու վերաբերյալ Հայաստանի հասարակության դիրքորոշումները (Գծանկար 11):



Գծանկար 10.

Մաքսային միության մասին բնակչության տեղեկացվածությունը ցածր է: Բնակչության գրեթե 40%-ը «չի լսել դրա մասին», ևս մոտ 30%-ը «լսել է, բայց չի պատկերացնում, թե ինչ է դա»: Մաքսային միության մասին «բավարար չափով» գիտի (նշենք, որ սա ինքնագնահատական է) բնակչության մոտ 10%-ը:

Կանխատեսելով, որ բնակչության տեղեկացվածությունը Մաքսային միության մասին ցածր է լինելու, Մաքսային Միությանը Հայաստանի անդամակցության նկատմամբ հարցվողի կարծիքը ստանալուց առաջ նրան համառոտակի բացատրվել է (կամ հիշեցվել), թե ինչ է այն իրենից ներկայացնում: Հարցը ձևակերպվել է հետևյալ կերպ. «Թույլ տվեք հիշեցնել, որ Մաքսային միությունում, որը հիմնադրել են Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը, մարդիկ կարող են ազատ տեղափոխվել երկրից երկիր և աշխատել այն երկրում, որտեղ ցանկանում են: Բացի դրանից, այդ երկրների միջև ապրանքները տեղափոխվում են ազատ, առանց արտահանման կամ ներկրման մաքսավճարի: Ինչպե՞ս եք վերաբերվում նրան, որ Հայաստանը միանա այդ Մաքսային միությանը»:

Պատասխանների բաշխումը ներկայացված է Գծանկար 11-ում. հարցվածների 86%-ը դրականորեն է վերաբերվում Հայաստանի՝ Մաքսային միություն մտնելուն, բացասական վերաբերմունք ունի ընդամենը 6%-ը:



Գծանկար 11.

Մշակութային-լեզվական դիրքորոշումները

Հետազոտության շրջանակում դիտարկվել են հետևյալ հայեցակարգերը, որոնք արտացոլում են Հայաստանի հասարակության մշակութային-լեզվական դիրքորոշումները.

1. Ռուսական և եվրոպական մշակութային տարածքներից Հայաստանի հասարակության «մշակութային հեռավորության» ընդհանուր (կենցաղային մակարդակում) ընկալումը Հայաստանի հասարակությունում;
2. Ո՞ր լեզուն է առավել ընդունելի Հայաստանի հասարակությունում՝ որպես հանրակրթական դպրոցում պարտադիր ուսուցման համար առավել կարևոր օտար լեզու;
3. Վերաբերմունքը միասեռական ամուսնությունների հանդեպ: Այս ցուցիչն արտացոլում է հասարակական հարաբերությունների ավանդական և պոստինդուստրիալ ընկալումների խորքային և հիմնարար (պարադիգմալ) տարբերությունը:

Հայաստանի հասարակությունում ռուսական և եվրոպական մշակութային տարածքներից ընդհանուր հեռավորության ընկալման գնահատման համար տրվել է հետևյալ հարցը. «Ընդհանուր առմամբ, որտեղի՞ վարք ու բարքն է հայկականին ավելի մոտ՝ ռուսակա՞նը, թե՞ եվրոպականը»:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի բնակչության 53%-ի կարծիքով՝ Հայաստանի հասարակության բարքերին ավելի մոտ են ռուսական հասարակության բարքերը (Գծանկար 12), իսկ անհամեմատ ավելի փոքր մասը (11%) համարում է, որ եվրոպական բարքերը: Հարցվածների 28%-ը համարում է, որ հայկական հանրության բարքերը նման չեն ո՛չ ռուսականին, ո՛չ էլ եվրոպականին:



Գծանկար 12.

Բնակչության ճնշող մեծամասնությունը (96%) համարում է, որ Հայաստանի հանրակրթական դպրոցներում անհրաժեշտ է [որևէ] օտար լեզվի պարտադիր ուսուցումը (Գծանկար 13):

Ռուսերենը հանրակրթական դպրոցներում ուսուցանելը առավել գերադասելի է համարում հարցվածների 73%-ը (Գծանկար 14), իսկ անգլերենը՝ 23%-ը:

Այդ տեսակետից այլ լեզու նշել է հարցվածների ընդամենը 2%-ը:



Գծանկար 13.



Գծանկար 14.

Հայաստանի բնակչության գերակշիռ մեծամասնությունը չի ընդունում միասեռ ամուսնությունների հնարավորության հեռանկարը՝ դրան բացասաբար է վերաբերվում ամբողջ բնակչության 96%-ը (Գծանկար 16)։


Վերաբերմունքը միասեռական ամուսնությունների հանդեպ
Դրական; 2%
Դժվ. պատ.; 2%
Չի. պատ.; 0%
Բացասական; 96%
Եվրոպական մի շարք երկրներում օրենք են ընդունել միասեռական ամուսնությունների մասին: Ինչպե՞ս կվերաբերվեիք դրանց լեգալացմանը Հայաստանում:

Գծանկար 15.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքները բերում են հետևյալ եզրակացություններին.

1. Հայաստանի բնակչության գերակշիռ մեծամասնությունը Ռուսաստանի հետ ինտեգրացումը գերադասում է Եվրոպական ինտեգրացումից։
2. Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի Մաքսային Միության մասին տեղեկացվելու դեպքում Հայաստանի միացումն այդ միությանը դրական է գնահատում հասարակության բացարձակ գերակշիռ մասը։
3. Հայաստանի հասարակությունը Ռուսաստանը համարում է գերակա դաշնակից և գործընկեր թուրքական և ադրբեջանական ռազմական սպառնալիքի, Ղարաբաղյան հակամարտության և արդյունաբերության զարգացման հարցերում։
4. Եվրոպական միությունը գերադասելի է Հայաստանի հասարակության համար գիտության զարգացման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում։
5. Հայաստանի հասարակության բացարձակ գերակշիռ մասը Հայաստանի համար շատ կարևոր է համարում Հայաստանի ապահովումը էժան բնական գազով և դեպի Ռուսաստան աշխատանքային միգրացիայի հնարավորությունը։
6. Հայաստանի բնակչությունը ռուսական մշակութային տարածքն ավելի մոտ է համարում, քան եվրոպականը, սակայն բնակչության գրեթե մեկ երրորդը համարում է, որ հայկական [կենցաղային] մշակութային տարածքը նման չէ ո՛չ ռուսականին, ո՛չ եվրոպականին։
7. Ռուսերենը շարունակում է ավելի գերադասելի լինել հայկական հանրության համար, քան անգլերենը։
8. Ավանդական ընտանեկան ու բարոյական բարքերի պահպանումը Հայաստանի բնակչության համար կարող է դառնալ նրա ինտեգրացիոն (քաղաքակրթական) ընտրությունը որոշող հիմնարար գործոններից մեկը։

Հավելված 1.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության ընտրանքը կազմելու համար օգտագործվել են Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) 2012թ. տվյալները, մասնավորապես՝ Հայաստանի դե-ֆակտո բնակչության բաշխումներն ըստ սեռի, տարիքի, բնակավայրի տիպի (մայրաքաղաք, քաղաքներ՝ առանց մայրաքաղաքի, գյուղեր) և մարզերի՝ մայրաքաղաքն ու 10 մարզերը (տե՛ս Գծանկար 16, զույգ սյունակների ձախ սյունակները)։

Հարցվողների հեռախոսային հարցման համար օգտագործվել են բջջային օպերատորների և գծային հեռախոսների պատահական հեռախոսահամարներ։ Իրականացված ընտրանքն իր սոցիալ-ժողովրդագրական բնութագրերով ստացվել է բավական բարձրորակ է (տե՛ս Գծանկար 16, զույգ սյունակների աջ սյունակները)։ Դրա մասին է վկայում այն, որ ընտրանքի համակշռման համար հաշվարկված կշիռները գտնվում են [0.6876; 1.8161] միջակայքում։

Քանի որ ՀՀ ԱՎԾ-ն հրապարակում է Հայաստանի դե-ֆակտո բնակչության սոցիալ-ժողովրդագրական միայն միաչափ բաշխումները, այդ պատճառով ընտրանքի համակշռման համար կիրառվել է իտերատիվ-ցիկլիկ ընթացակարգը։



Գծանկար 16.

Հավելված 2.

ԱՄՓՈՓԻՉ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Հարց	Պատասխաններ	Տոկոս
1. Ասացեք, խնդրեմ, որքանո՞վ եք Դուք հետաքրքրված Եվրոպական միության և Ռուսաստանի հետ Հայաստանի փոխհարաբերությունների հարցով. շա՞տ եք հետաքրքրված, ավելի շուտ հետաքրքրվա՞ծ եք, ավելի շուտ հետաքրքրված չե՞ք, բոլորովի՞ն հետաքրքրված չեք:	Շատ հետաքրքրված է	32.5%
	Ավելի շուտ հետաքրքրված է	41.3%
	Ավելի շուտ հետաքրքրված չէ	10.0%
	Բոլորովին հետաքրքրված չէ	15.0%
	Դժվարացել է պատասխանել	1.1%
	Ընդամենը	**100.0%**
2. Բարեկամական երկրները (թույլ է տրվել մինչև 5 պատասխան: Երկիրը նշած հարցվողների տոկոսը)	Ռուսաստան	82.1%
	Ֆրանսիա	20.6%
	Վրաստան	11.6%
	ԱՄՆ	11.1%
	Ոչ մի երկիր	6.5%
	Դժվարացել է պատասխանել	6.3%
	Իրան	4.1%
	Գերմանիա	4.0%
	Բելառուս	3.4%
	Ուկրաինա	2.7%
	Իտալիա	1.6%
3. Թշնամական երկրները (թույլ է տրվել մինչև 5 պատասխան: Երկիրը նշած հարցվողների տոկոսը)	Սադրբեջան	76.7%
	Թուրքիա	72.3%
	Վրաստան	5.3%
	Դժվարացել է պատասխանել	5.1%
	Ոչ մի երկիր	3.1%
	Իրան	2.8%
	Ռուսաստան	2.6%
	ԱՄՆ	2.2%
	Իսլամական երկրներ	2.1%
	Գերմանիա	1.2%
	Մեծ Բրիտանիա	1.1%

Հարց	Պատասխաններ	Տոկոս
4. Ձեր կարծիքով, ո՞ւմ հետ Հայաստանը պետք է զարգացնի հարաբերություններն առաջին հերթին՝ Ռուսաստանի՞, թե՞ Եվրոպական միության:	Ռուսաստանի	67.3%
	Եվրամիության	17.2%
	Երկուսի հետ էլ	11.5%
	Նրանցից ոչ մեկի հետ	0.9%
	Հրաժարվել է պատասխանել	0.0%
	Դժվարացել է պատասխանել	3.1%
	Ընդամենը	**100.0%**
5. Իսկ եթե Հայաստանը ստիպված լինի ընտրել. Հարաբերությունները զարգացնել կամ միայն Ռուսաստանի, կամ էլ միայն Եվրամիության հետ, ո՞ւմ հետ համագործակցությունը պետք է ընտրի Հայաստանը: (Հարցը տրվել է այն 11.5% հարցվածներին, ովքեր 4-րդ կետին պատասխանել են «Երկուսի հետ էլ»: «Ռուսաստանի հետ» պատասխանների ընդհանուր թիվը այլընտրանքային ընտրության դեպքում = է 67.3% + 7.6% = 74.9%.)	Ռուսաստանի	7.6%
	Եվրամիության	1.6%
	Հրաժարվել է պատասխանել	0.0%
	Դժվարացել է պատասխանել	2.4%
	Նշանակություն չունի	88.5%
	Ընդամենը	**100.0%**
6. Այժմ ես կթվարկեմ մի քանի ոլորտ, իսկ Դուք պատասխանեք, թե ում հետ է ավելի գերադասելի Հայաստանի համագործակցությունն այդ ոլորտներում՝ Ռուսաստանի՞, թե՞ Եվրամիության: Ո՞վ է Հայաստանի ավելի գերադասելի դաշնակիցն ընդդեմ թուրքական և ադրբեջանական ռազմական սպառնալիքի՝ Ռուսաստա՞նը, թե՞ Եվրամիությունը:	Ռուսաստան	72.3%
	Եվրամիություն	9.8%
	Երկուսն էլ	3.4%
	Նրանցից ոչ մեկը	3.8%
	Հրաժարվել է պատասխանել	0.1%
	Դժվարացել է պատասխանել	10.5%
	Ընդամենը	**100.0%**
7. Ո՞վ է Հայաստանի ավելի հուսալի դաշնակիցը Ղարաբաղյան հարցում՝ Ռուսաստա՞նը, թե՞ Եվրամիությունը:	Ռուսաստանը	63.8%
	Եվրամիությունը	14.1%
	Երկուսն էլ	5.1%
	Նրանցից ոչ մեկը	6.0%
	Հրաժարվել է պատասխանել	0.2%
	Դժվարացել է պատասխանել	10.8%
	Ընդամենը	**100.0%**

Հարց	Պատասխաններ	Տոկոս
8. Ո՞ւմ հետ համագործակցությունն է ավելի նպաստավոր Հայաստանի գիտության զարգացման համար՝ Եվրոպական միությա՞ն, թե՞ Ռուսաստանի:	Ռուսաստանի	27.5%
	Եվրամիության	47.4%
	Երկուսի հետ էլ	15.0%
	Նրանցից ոչ մեկի հետ	2.4%
	Հրաժարվել է պատասխանել	0.1%
	Դժվարացել է պատասխանել	7.7%
	Ընդամենը	**100.0%**
9. Ո՞ւմ հետ համագործակցությունն է ավելի նպաստավոր Հայաստանի արդյունաբերության զարգացման համար՝ Ռուսաստանի՞, թե՞ Եվրամիության:	Ռուսաստանի	49.6%
	Եվրամիության	23.8%
	Երկուսի հետ էլ	16.7%
	Նրանցից ոչ մեկի հետ	2.4%
	Հրաժարվել է պատասխանել	0.0%
	Դժվարացել է պատասխանել	7.6%
	Ընդամենը	**100.0%**
10. Ո՞ւմ հետ համագործակցությունն է ավելի նպաստավոր Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության համար՝ Ռուսաստանի՞, թե՞ Եվրամիության:	Ռուսաստանի	25.1%
	Եվրամիության	51.8%
	Երկուսի հետ էլ	6.3%
	Նրանցից ոչ մեկի հետ	5.7%
	Հրաժարվել է պատասխանել	0.2%
	Դժվարացել է պատասխանել	10.9%
	Ընդամենը	**100.0%**
11. Ի՞նչն է ավելի գերադասելի Հայաստանի համար. գազի և էլեկտրաէներգիայի գների իջեցո՞ւմը, թե՞ Եվրամիությունից բերվող ապրանքների գների իջեցումը (*«Երկուսն էլ» պատասխանը չընդունել*):	Գազի և էլեկտրաէներգիայի գների իջեցումը	87.5%
	ԵՄ-ից բերվող ապրանքների գների իջեցումը	6.8%
	Հրաժարվել է պատասխանել	0.4%
	Դժվարացել է պատասխանել	5.3%
	Ընդամենը	**100.0%**
12. Հայաստանի համար որքանո՞վ է կարևոր Ռուսաստան ազատ այցելելու և աշխատելու հնարա-	Շատ կարևոր	2.0%
	Կարևոր	2.3%

Հարց	Պատասխաններ	Տոկոս
վորությունը. շա՞տ կարևոր է, կարևո՞ր է, միջի՞ն կարևորության է, քի՞չ կարևոր է, բոլորովի՞ն անկարևոր է:	Միջին կարևորության	9.3%
	Քիչ կարևոր	22.4%
	Բոլորովին անկարևոր	61.3%
	Հրաժարվել է պատասխանել	0.3%
	Դժվարացել է պատասխանել	2.3%
	Ընդամենը	**100.0%**
13. Որքանո՞վ եք տեղեկացված, թե ինչ է «Մաքսային միությունը». չեք լսել այդ մասին, լսել եք, բայց չեք պատկերացնում, թե ինչ է դա, ընդհանուր առմամբ մոտավորապես պատկերացնում եք, թե ինչ է դա, բավարար չափով գիտեք:	Չի լսել այդ մասին	38.6%
	Լսել է, բայց չի պատկերացնում, թե ինչ է դա	29.1%
	Ընդհանուր առմամբ մոտավորապես պատկերաց-նում է, թե ինչ է դա	23.3%
	Բավարար չափով գիտե	8.9%
	Ընդամենը	**100.0%**
14. Թույլ տվեք հիշեցնել, որ Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը հիմնել են Մաքսային միություն, որի շրջանակում մարդիկ կարող են ազատ տեղաշարժվել երկրից երկիր, աշխատել այն երկրում, որտեղ ցանկանում են, ինչպես նաև այդ երկրներում բոլոր ապրանքները տեղաշարժվում են ազատ, առանց ներկրման և արտահանման մաքսավճարների: Ինչպե՞ս եք վերաբերվում այն բանին, որ Հայաստանը միանա այդպիսի Մաքսային միությանը:	Խիստ բացասաբար	2.4%
	Ավելի շուտ բացասաբար	3.2%
	Ավելի շուտ դրական	36.1%
	Միանգամայն դրական	50.2%
	Հրաժարվել է պատասխանել	1.3%
	Դժվարացել է պատասխանել	6.8%
	Ընդամենը	**100.0%**
15. Ձեր կարծիքով, արդյո՞ք պետք է պարտադիր լինի Հայաստանի հանրակրթական դպրոցներում որևէ օտար լեզվի ուսուցումը:	Այո	2.3%
	Ոչ	97.4%
	Հրաժարվել է պատասխանել	0.1%
	Դժվարացել է պատասխանել	0.3%
	Ընդամենը	**100.0%**
16.1. Ո՞ր օտար լեզուն է ավելի գերադասելի հայկական դպրոցներում (նշել Աղյուսակ 7.1.-ում)	Ռուսերեն	68.9%
	Անգլերեն	27.9%
	Ֆրանսերեն	1.1%

Հարց	Պատասխաններ	Տոկոս
	Գերմաներեն	0.3%
	Իտալերեն	0.0%
	Իսպաներեն	0.1%
	Չինարեն	0.1%
	Թուրքերեն	0.4%
	Վրացերեն	0.0%
	Լատիներեն	0.0%
	Հրաժարվել է պատասխանել	0.0%
	Դժվարացել է պատասխանել	1.4%
	Ընդամենը	**100.0%**
16.2. Իսկ երկրորդ լեզո՞ւն:	Ռուսերեն	22.9%
	Անգլերեն	63.3%
	Ֆրանսերեն	4.0%
	Գերմաներեն	2.3%
	Իտալերեն	0.1%
	Իսպաներեն	0.1%
	Չինարեն	0.1%
	Թուրքերեն	0.4%
	Վրացերեն	0.2%
	Լատիներեն	0.2%
	Հրաժարվել է պատասխանել	0.1%
	Դժվարացել է պատասխանել	6.4%
	Ընդամենը	**100.0%**
17. Իսկ այժմ մի երկու հարց այն խնդրի մասին, որը շատ է քննարկվում վերջին ժամանակներս: Եվրոպական մի շարք երկրներում ընդունվել են օրենքներ, որոնք թույլ են տալիս միասեռական ամուսնությունները: Ինչպիսի՞ն կլիներ Ձեր վերաբերմունքը, եթե դա թույլատրվեր Հայաստանում. խիստ բացասակա՞ն, ավելի շուտ բացասանա՞ն, ավելի շուտ դրակա՞ն, միանգամայն դրակա՞ն:	Խիստ բացասական	91.7%
	Ավելի շուտ բացասական	4.1%
	Ավելի շուտ դրական	1.5%
	Միանգամայն դրական	0.7%
	Հրաժարվել է պատասխանել	0.4%
	Դժվարացել է պատասխանել	1.8%
	Ընդամենը	**100.0%**

Հարց	Պատասխաններ	Տոկոս
18. Ընդհանուր առմամբ, ո՞ւմ բարքերն են ավելի մոտ հայկականին՝ ռուսակա՞ն, թե՞ եվրոպական. միանշանակ ռուսակա՞ն, ավելի շուտ ռուսակա՞ն, ավելի շուտ եվրոպակա՞ն, միանշանակ եվրոպակա՞ն:	Միանշանակ ռուսական	18.8%
	Ավելի շուտ ռուսական	29.0%
	Ավելի շուտ եվրոպական	11.7%
	Միանշանակ եվրոպական	2.1%
	Ոչ մեկը, ոչ մյուսը	30.2%
	Հրաժարվել է պատասխանել	0.1%
	Դժվարացել է պատասխանել	8.1%
	Ընդամենը	**100.0%**
19. Եվրոպայի միջուկը (թույլ է տրվել մինչև 5 պատասխան: Ներկայացված են նշված երկրի բոլոր նշումների քանակության տոկոսները)	Ֆրանսիա	31.8%
	Գերմանիս	21.2%
	Մեծ Բրիտանիա	7.9%
	Իտալիա	7.3%
	Իսպանիա	4.2%
	Ռուսաստան	3.0%
	Բելգիա	2.9%
	Շվեդիա	2.4%
	Հունաստան	1.9%
	Շվեյցարիա	1.5%
	Ավստրիա	1.4%
	Լեհաստան	1.3%
	Բուլղարիա	1.1%
	Նիդեռլանդներ	1.1%
	Չեխիա	0.7%
20. Նշել հարցվողի սեռը	Արական	46.2%
	Իգական	53.8%
	Ընդամենը	**100.0%**
21. Քանի՞ տարեկան եք:	18-29	27.8%
	30-44	25.6%
	45-59	27.9%
	60 <	18.7%
	Ընդամենը	**100.0%**

Հարց	Պատասխաններ	Տոկոս
22. Ձեր կրթությունը	Միջնակարգ և ավելի ցածր	34.8%
	Միջնակարգ մասնագիտական	21.9%
	Թերի բարձրագույն	5.9%
	Բարձրագույն և գիտական աստիճանով	37.4%
	Հրաժարվել է պատասխանել	0.0%
	Ընդամենը	**100.0%**
23. Մարզը	Արագածոտն	4.5%
	Արարատ	9.3%
	Արմավիր	10.9%
	Գեղարքունիք	6.5%
	Երևան	35.6%
	Լոռի	8.2%
	Կոտայք	7.2%
	Շիրակ	7.2%
	Սյունիք	3.3%
	Վայոց ձոր	1.6%
	Տավուշ	5.3%
	Հրաժարվել է պատասխանել	0.3%
	Ընդամենը	**100.0%**
24. Ապրում եք քաղաքո՞ւմ, թե՞ գյուղում	Երևան	35.6%
	Քաղաք	29.5%
	Գյուղ	34.9%
	Ընդամենը	**100.0%**
25. Ինչպե՞ս կգնահատեիք Ձեր ընտանիքի բարեկեցությունը. միջինից ցա՞ծր, միջինից փոքր-ինչ ցա՞ծր, միջի՞ն, միջինից փոքր-ինչ բա՞րձր, միջինից բա՞րձր:	Միջինից ցածր	20.8%
	Միջինից փոքր-ինչ ցածր	11.8%
	Միջին	48.8%
	Միջինից փոքր-ինչ բարձր	8.7%
	Միջինից բարձր	8.8%
	Հրաժարվել է պատասխանել	1.1%

Հարց	Պատասխաններ	Տոկոս
	Դժվարացել է պատասխանել	0.1%
	Ընդամենը	**100.0%**
26. Ձեր հիմնական զբաղմունքը	Վարձու աշխատող	35.9%
	Գործարար	2.3%
	Ֆերմեր	3.4%
	Զբաղված է ինքնուրույն գյուղատնտեսական գործունեությամբ	8.7%
	Անգործ	15.0%
	Ուսանող	5.2%
	Թոշակառու	11.4%
	Չի աշխատում	16.1%
	Այլ	1.0%
	Հրաժարվել է պատասխանել	1.0%
	Ընդամենը	**100.0%**